ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 փետրվարի 2026 թվականի N 190-Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 1910-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 1308-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը և 23-րդ հոդվածի 3-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 18-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 2057-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակում կատարել փոփոխություն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի

Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1910-Ն որոշման NN 3, 4, 5, 9, 9.1 և 10 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1, 2, 3, 4 և 5 հավելվածների:

2. Թույլատրել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին «Մերիդիան Հոլդինգ» փակ բաժնետիրական ընկերությունից վարձակալել 496,9 քառ. մետր ոչ բնակելի տարածքներ՝ ամսական 350,000 դրամ վարձավճարով:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի սեպտեմբերի 11-ի N 1308-Ն որոշման N 7 հավելվածի անբաժանելի մաս համարվող N 1 հավելվածի «Խոշորացված ցուցիչներ» աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՑՈՒՑԻՉՆԵՐ

NN ը/կ	Անվանումը	Չափի միավորը	Քանակը
1.	**Վերակառուցվող տարածքներ**	մ ^{2}	35.521.8
	— Հ. 1 մասնաշենք, նկուղային հարկ (նիշը՝ 6.00)	մ ^{2}	8330,0
	— Հ. 1 մասնաշենք, 1-ին հարկ (նիշը՝ 0.00)	մ ^{2}	10,311,9
	— Հ. 1 մասնաշենք «անտրեսոլ» (նիշը՝ 4.80)	մ ^{2}	1108,8
	— Հ. 2 մասնաշենք, 1-ին հարկ (նիշը՝ 0.00)	մ ^{2}	2996,7
	— Հ. 2 մասնաշենք, 2-րդ հարկ (նիշը՝ 6.00)	մ ^{2}	3240,0
	— Հ. 2 մասնաշենք, 3-րդ հարկ (նիշը՝ 15.60)	մ ^{2}	3240,0
	— Հ. 2 մասնաշենք, 4-րդ հարկ (նիշը՝ 10.80) (և «անտրեսոլ» 5-րդ հարկ) (նիշը՝ 19.60)	մ ^{2}	3288,0 252,0
	— Հ. 2 մասնաշենք, 6-րդ հարկ (նիշը՝ 22.80) — * Ամրագրված տարածք	մ ^{2}	3288,0 *
	— Հ. 3 մասնաշենք, 1-ին հարկ (նիշը՝ 0.00)	մ ^{2}	2754,4

2.	**Նոր կառուցվող տարածքներ**		
	— «Ա» մասնաշենք՝ թեքահարթակ (նիշը՝ 6.00)	մ ^{2}	283,8
	— «Բ» մասնաշենք՝ կցակառույց (նիշը՝ 0.00) (նիշը՝ -6.00)	մ ^{2}	1404,0 700,0
	— «Գ» մասնաշենք՝ նախասրահ (նիշը՝ 0.00)	մ ^{2}	339,5
	— «Դ» մասնաշենք – 5 հարկ	մ ^{2}	7850,7
	— «Ե» մասնաշենք՝ երկհարկանի անցուղի՝ «Դ» մասնաշենքից դեպի 2-րդ մասնաշենքի հարկ 5	մ ^{2}	1320,4
	— «Զ» մասնաշենք՝ երկհարկանի սանհանգույց	մ ^{2}	158,70
	— «Է» մասնաշենք՝ նախասրահ (նիշը՝ 6.00)	մ ^{2}	336,4
3.	**Համար 5, 6, 7 շինություններ-ինժեներական կառույցներ**	մ ^{2}	368,2
	—էլ. ենթակայան հ. 4	մ ^{2}	69,3
	—էլ. ենթակայան հ. 2 (նորակառույց)	մ ^{2}	93,4
	—էլ. ենթակայան հ. 3 (նորակառույց)	մ ^{2}	93,2
	—կաթսայատուն (նորակառույց)	մ ^{2}	112,3
4.	**Բետոնե հարթակների հողային աշխատանքներ (ժամանակավոր կառույցների համար)**	մ ^{2}	6750,0
5.	**Ընդհանուր տարածքների բարեկարգում**	մ ^{2}	39,000,0

*** Աստղանիշով գրված է Հ. 2 մասնաշենքի 6-րդ հարկի տարածքը, որն ամրագրված է «COP 17» պատասխանատուի կողմից (նիշը՝ 22,80):**»:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

20.02.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ